Երկրորդ ընթերցում

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Կ-755-27.12.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19.6-րդ հոդվածը լրացնել հետևյալ մասերով.

«

12. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7108 ծածկագրին պատկանող ապրանքներ (բացի Հայաստանի Հանրապետության ծագման ոսկի պարունակող համաձուլվածքներ և խտանյութեր) արտահանելու յուրաքանչյուր մեկ կիլոգրամի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ արտահանման (տեղափոխման) և «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգերով արտահանվող և հետագայում ներմուծվող ապրանքների	բազային տուրքի 180-ապատիկի չափով
13. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7110 ծածկագրից պլատինի ապրանքներ (բացի Հայաստանի Հանրապետության ծագման պլատին պարունակող համաձուլվածքներ և խտանյութեր) արտահանելու յուրաքանչյուր մեկ կիլոգրամի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ արտահանման (տեղափոխման) և «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային	բազային տուրքի 90-ապատիկի չափով

ընթացակարգերով արտահանվող և հետագայում ներմուծվող ապրանքների	
14. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7110 ծածկագրից պալադիումի ապրանքներ (բացի Հայաստանի Հանրապետության ծագման պալադիում պարունակող համաձուլվածքներ և խտանյութեր) արտահանելու յուրաքանչյուր մեկ կիլոգրամի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ արտահանման (տեղափոխման) և «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգերով արտահանվող և հետագայում ներմուծվող ապրանքների	բազային տուրքի 105-ապատիկի չափով

»

Հոդված 2. Օրենքի 38-րդ հոդվածի վերջին պարբերությունում «2-6-րդ» թվերը փոխարինել «2-14-րդ» թվերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երկրորդ ընթերցում
ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Կ-755-27.12.2023-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19.6-րդ հոդվածը լրացնել հետեւյալ մասերով.

~~7.~~ 12. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7108 ծածկագրին պատկանող ապրանքներ (բացի Հայաստանի Հանրապետության ծագման ոսկի պարունակող համաձուլվածքներ եւ խտանյութեր) արտահանելու յուրաքանչյուր մեկ կիլոգրամի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ արտահանման (տեղափոխման) եւ «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգերով արտահանվող եւ հետագայում ներմուծվող ապրանքների	բազային տուրքի ~~200~~ 180-ապատիկի չափով
~~8.~~ 13. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7110 ծածկագրից պլատինի ապրանքներ (բացի Հայաստանի Հանրապետության ծագման պլատին պարունակող համաձուլվածքներ եւ խտանյութեր) արտահանելու յուրաքանչյուր մեկ կիլոգրամի լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ արտահանման (տեղափոխման) եւ «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգերով արտահանվող եւ հետագայում ներմուծվող ապրանքների	բազային տուրքի ~~100~~ 90-ապատիկի չափով
~~9.~~ 14. «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 7110 ծածկագրից պալադիումի ապրանքներ (բացի Հայաստանի Հանրապետության ծագման պալադիում պարունակող համաձուլվածքներ եւ խտանյութեր) արտահանելու յուրաքանչյուր մեկ կիլոգրամի	բազային տուրքի ~~115~~ 105-ապատիկի չափով

լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ արտահանման (տեղափոխման) եւ «Վերամշակում մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգերով արտահանվող եւ հետագայում ներմուծվող ապրանքների	

Հոդված 2. Օրենքի 38-րդ հոդվածի վերջին պարբերությունում «2-6-րդ» թվերը փոխարինել «~~2-9~~ ***2–14-րդ***» թվերով:

Հոդված 3. ~~*Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթ* 1.~~ Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

~~2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական *նորմատիվ* իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա երկամսյա ժամկետում:~~

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-755-27.12.2023-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Վերնագիր	Նախագծի վերնագրից առաջարկում ենք հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը»:	Ընդունվել է: Նախագծի վերնագրից հանվել են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը:	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 12-14-րդ մասեր	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի ցանկի 2-րդ այնունակի՝ 200, 100 և 115 թվերը փոխարինել	Ընդունվել է: Միջազգային շուկայում տեղի ունեցող գնային փոփոխություններին առավել	Ընդունվել է

			համապատասխանաբար՝ 180, 90 և 105 թվերով:	ճկուն արձագանքելու նպատակով շահագրգիռ պետական մարմինների հետ դիտարկվել են նախագծով առաջարկվող պետական տուրքի դրույքաչափերը, որի հիման վրա նպատակահարմար է գտնվել ճշգրտել պետական տուրքի չափը՝ այն նվազեցնելու տեսանկյունից:	
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածիներ	Հաշվի առնելով, որ Ազգային Ժողովի կողմից արդեն իսկ ընդունվել է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» (Կ-659-05.09.2023-ՏՀ-011/1) օրենքի նախագիծը, որով կատարվել են լրացումներ նույն՝ 19.6-րդ հոդվածում (ավելացվել են 7-11-րդ մասեր)՝ առաջարկվում է սույն Նախագծում փոխել նաև նույն հոդվածում լրացվող մասերի համարակալումը, ինչպես նաև՝ համապատասխանեցնել 2-րդ հոդվածի թվերը:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածում փոխվել է 7-9-րդ մասերի համարակալումը (դարձնելով այն 12-14 մասեր), ինչպես նաև 2-րդ հոդվածի «2-6-րդ» թվերը փոխարինվել են «2-14-րդ» թվերով:	Ընդունվել է

4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»:	Ընդունվել է: 3-րդ հոդվածի վերնագիրը հանվել է:	Ընդունվել է
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մաս	Հիմք ընդունելով, որ ԵՏՀ Կոլեգիայի 06.11.2014թ. N 199 որոշմամբ սահմանվել են լիցենզիա տրամադրելու համար դիմումի լրացման ցուցումը, ինչպես նաև լիցենզիայի ձևաչափը, որը միասնական է ԵԱՏՄ անդամ բոլոր պետությունների համար՝ առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասը հանել:	Ընդունվել է: Կատարվել է փոփոխություն:	Ընդունվել է